Ի՞նչ Պէտք է Իմանաք Երբ Ձեր Սեփական Գործից Կենսաթոշակի Անցնեք

2006թ.

Եթէ դուք տիրապետում եւ աշխատեցնում եք մի սեփական ձեռնարկություն եւ պատրաստվում եք անցնել կենսաթոշակի, սակայն լրիւ կենսաթոշակի անցնելու տարիքից երիտասարդ եք, Սոցիալական Ապահովությունը պէտք է իմանա եթէ դուք ամբողջությամբ կենսաթոշակի անցնելու եք, թէ տակաւին ծրագրում եք աշխատել: Եթէ դուք լրիւ կենսաթոշակի անցնելու տարիքն եք (կամ աւելի), դուք կարող եք ստանալ ձեր Սոցիալական Ապահովության նպաստները ամբողջությամբ՝ նոյնիսկ եթէ շարունակեք ձեր աշխատանքը:

Մեզ համար հեշտ է որոշել գործավորի մը «կենսաթոշակառու» ըլլալը, որովհետեւ նրա վճարման կտրոնները ապացոյց են: Սակայն երբ դուք աշխատում եք մի ձեռնարկությունում որի սեփականատէրը դուք եք (կամ ձեր ընտանիքը), կամ դուք ընկերության պաշտոնյա եք՝ մեր որոշումը հեշտ չի: Որովհետեւ դուք հնարավորություն ունեք ձեր եկամուտի գումարը ուղղել, նպաստներ ստանալու դիմում ներկայացնելու ժամանակ պէտք է Սոցիալական Ապահովության լրացուցիչ տեղեկություն տրամադրեք՝ օրինակ, հարկային հայտարարագիր կամ ընկերության ցուցանիշներ: Սա մեզ օգնում է որոշել ձեր կենսաթոշակի նպաստի գումարը: Ձեր հասույթը պէտք է համապատասխանի ձեր կատարած աշխատանքին: Դուք չեք կարող ձեզ աւելի քիչ աշխատավարձ վճարել՝ Սոցիալական Ապահովության հասույթի սահմաններում մնալու նպատակով:

Ինչպէ՞ս ձեր հասույթը Սոցիալական Ապահովության նպաստը կրճատում է

Եթէ 2006 թվականին դուք լրիւ կենսաթոշակի անցնելու տարիքից աւելի երիտասարդ եք (65 տարի եւ 8 ամիս), դուք կարող եք ունենալ մինչեւ 12,480 դոլար աշխատանքային հասույթ եւ տակաւին ստանալ ձեր Սոցիալական Ապահովության բոլոր նպաստները: Սահմանից բարձր եղող իւրաքանչիւր 2 դոլար եկամուտի համար, 1 դոլար պահվում է ձեր նպաստներից: Ձեր լրիւ կենսաթոշակի անցնելու տարիքը լրացնելու տարին (65 տարի եւ 8 ամիս, 2006 թվականին) ձեր նպաստները կրճատվելու են 1 դոլար իւրաքանչիւր 3 դոլարից փոխարեն եթէ31,800 դոլարից բարձր հասույթ ունեք՝ մինչեւ լրիւ կենսաթոշակի տարիքը լրանալու ամիսը: Երբ հասնեք ձեր լրիւ կենսաթոշակի անցնելու տարիքը, ձեր հասույթը չի պակսեցնում ձեր Սոցիալական Ապահովության նպաստները:

Դուք իսկապէ՞ս կենսաթոշակառու եք

Որպէսզի որոշենք ձեր կենսաթոշակի անցնելու մակարդակը, մենք պահանջում ենք լրացուցիչ տեղեկություն եւ վկայություն, եթէ դուք—

- Ընտանեկան ձեռնարկության մաս կազմում եք, կամ ընտանիքի այլ անդամը յանձն առնում է ձեր պարտականությունները՝ մասամբ կամ լրիւ.
- Շարունակում եք մատուցել նոյն ծառայությունները ձեռնարկության համար սակայն կրճատում եք հատուցումը.
- Կարողություն ունեք ձեր հասույթը ուղղել.
- Տակաւին ձեռնարկության սեփականատէրն եք (կամ մասնակի սեփականատէր), եւ ունեք ձեռնարկության բաժնետոմսեր.
- Բաժանում եք աշխատավարձը ուրիշների միջեւ (օրինակ, բաժանում եք ձեր նախկին աշխատավարձը ձեր եւ ձեր ամուսնու/ կնոջ կամ երեխաների միջեւ):

Յաւելյալ վկայության պահանջումը

Կենսաթոշակի նպաստ ստանալու դիմումի ներկայացման ընթացքում մենք հարցնում ենք ձեր կենսաթոշակի անցնելուց ետք ունեցած ծրագիրներու մասին: Հնարավոր է որ դուք լրացնեք *Self-Employment/ Corporate Officer Questionnaire* (SSA-4184), *Ինքնաշխատի/ Ընկերության Պաշտոնյայի Հարցարանը* որպէսզի մենք կարողանանք որոշել եթէ դուք իսկապէս նպատակ ունեք կենսաթոշակի անցնել: Մենք նաեւ կարող ենք պահանջել հետեւյալ լրացուցիչ փաստաթղթերը՝ անձնական եւ առեւտրային հարկային հայտարարագրերը, ընկերության որոշումները, բաժնետոմսերի փոխանցման մասին համաձայնագրերը եւ հրաժարականները: Մենք հատուկ ուշադրություն ենք դարձնում այն դէպքերուն երբ ձեր աշխատավարձը կրճատվել է, բայց դուք վարձատրվել եք վճարման այլ ձեւով: Դա կարող է ընդգրկել շահաբաժնի ավելացում, ընտանիքի այլ անդամի աշխատավարձի ավելացում (առանց պարտականությունների փոփոխման), փոխատվությունների հետվճարում, չափազանց բարձր վարձավճար եւ առեւտրային անբացատրելի ծախսեր:

Ի՞նչն ենք հասույթ հաշվում

Երբ դուք շարունակում եք ստանալ հատուցում, մենք հաշվի ենք առնում աշխատանքի ընթացքում ձեր կատարած աշխատանքն ու վճարումը եւ բաղդատում ենք այս տեղեկությունը «կենսաթոշակի անցնելուց» յետոյ ձեր աշխատանքի եւ հասույթի հետ: Մենք արժէքավորում ենք ձեր ծառայությունը բաղդատելով ձեր տրամադրած ժամանակը եւ ծառայությունների տեսակը ձեր վճարումի հետ: Եթէ մենք որոշենք, որ ձեր ծառայությունների արժէքը գերազանցում է եկամուտը, մենք այդ ծառայություններու դրամական արժէք նշանակում ենք եւ հաշվում այդ գումարը Սոցիալական Ապահովության տարեկան հասույթի սահմաններու դէմ:

Միեւնույն ժամանակ, եթէ մենք որոշենք, որ դուք չեք անցել կենսաթոշակի եւ ձեր հասույթը պակաս եք հայտարարագրել, մենք իրավունք ունենք ճշգրտելու ձեր Սոցիալական Ապահովության հասույթների արձանագրությունը: Մենք նաեւ կարող ենք տեղեկացնել Ներքին Հարկային Վարչության, որպէսզի անոնք որոշեն եթէ ձեր հարկային պարտավորությունները ճշգրիտ են, կամ կարիք ունեն ճշգրտման:

Օրինակ

Հետեւյալ օրինակը նկարագրում է մի իրավիճակ, որը պահանջում է մանրամասն հարցազրույց եւ սովորականէ աւելի փաստագրում, որովհետեւ անձը կենսաթոշակի է անցնում ընտանեկան ձեռնարկությունից կամ ընկերությունից: Պրն. Տավենփորտը կահույքի խանութի սեփականատէրն ու տնօրէնն է, եւ պատրաստվում է Սոցիալական Ապահովության նպաստներ ստանալու դիմում ներկայացնելու: Նա որոշում է իր կնոջը նշանակել որպէս տնօրէն, բայց ինքն մտադիր է տակաւին վերահսկել եւ տնօրինել ձեռնարկությունը: Մենք բաղդատում ենք իր հասույթը իր կատարած աշխատանքի մակարդակին հետ որ կատարում էր՝ իր կնոջ տնօրէն նշանակելուց առաջ:

Եթէ մենք որոշենք, որ իր «կենսաթոշակի անցնելը» պարզապէս փաստաթղթային մի գործառնություն է, (որովհետեւ հասույթը փոխանցվում է իր կնոջը առանց կրճատելու իր ծառայությունները), մենք ճշգրտում ենք իր հասույթի արձանագրությունը ՝ եւ վճարում իր նպաստները ըստ այդ ճշգրտված արձանագրության: Մենք կզգուշացնենք Պրն. Տավենպորտին, որ եթէ նա ցանկություն ունի շարունակել աշխատանքը եւ ստանալ իր Սոցիալական Ապահովության նպաստները, իր հասույթի գումարը պէտք է համապատասխանի իր կատարած աշխատանքի:

Սոցիալական Ապահովության հետ ժամանակին կապ հաստատելը կարեվոր է

Նպաստներ ստանալու դիմում ներկայացնելուց առաջ, կապ հաստատեք Սոցիալական Ապահովության հետ որպէսզի իմանաք թէ ինչ փաստաթղթեր անհրաժեշտ են: Հիշեցեք՝ որ եթէ դուք լրիւ կենսաթոշակային տարիքից երիտասարդ եք, դուք պէտք է «կենսաթոշակի» անցնեք որպէսզի ստանաք «նպաստ», կամ առնվազն նվազեցնեք ձեր մասնակցությունը ձեր ընկերության մէջ եւ իջեցնեք ձեր հասույթը սահմանային քանակից վար: Դա մեզ հնարավորություն կտա վճարել ձեր նպաստը մասամբ կամ լիովին:

Սոցիալական Ապահովության հետ կապ հաստատելը

Հավելյալ տեղեկության համար, այցելեցեք մեր կայքէջը, ***www.socialsecurity.gov*** ուր նաեւ կարող եք գտնել մեր վերջին հրատարակությունները: Կարող եք նաեւ զանգահարել հետեւյալ անվճար թվին **1-800-772-1213** (խուլերը եւ դժուար լսողները թող զանգահարեն հետեւյալ հատուկ TTY թվին **1-800-325-0778**): Մենք կարող ենք պատասխանել ձեր մասնայատուկ հարցումները առաւօտյան ժամը 7-ից մինչեւ երեկոյան ժամը 7, Երկուշաբթի օրից մինչեւ Ուրբաթ: Ինքնաշխատ հեռաձայնային ծառայությամբ մենք որոշ հարցերի կարող ենք պատասխանել եւ տեղեկություններ հայթայթել օրը 24 ժամ:

Եթե Թարգմանիչի Պետք Ունեք. Մենք ձեզ համար անվճար թարգմանիչ կարող ենք տրամադրել որպեսզի դուք կարողանաք մեզ հետ ձեր գործերը կատարել: Այս թարգմանչական ծառայությունը կարող եք գտնել մեր գրասենյակներում եւ հեռաձայնի վրայ: Զանգահարեցե՛ք մեզ հետեւյալ թվին **1-800-772-1213** եւ ճնշե՛ք թիւ մեկը: Հեռաձայնը պատասխանող ներկայացուցիչը միացնում է ձեզ թարգմանիչի հետ որպեսզի ան օգնէ ձեզի: Եթե չ՝կարողացանք հեռաձայնով օգտակար լինել, ժամադրություն ենք տալիս որպեսզի դուք այցելեք ձեր տեղական գրասենյակը որտեղ ներկայ կը լինի նաեւ թարգմանիչը:

Մենք բոլոր խօսակցությունները գաղտնի պահում ենք: Ուզում ենք նաեւ վստահ լինել թէ դուք ստանում եք ճշգրիտ տեղեկություն ու քաղաքավար ծառայություն: Այս պատճառով, Սոցիալական Ապահովության երկրորդ ներկայացուցիչ մը հսկում է որոշ խօսակցությունները:

Social Security Administration
SSA Publication No. 05-10038-AM
When You Retire From Your Own Business:
What You Need To Know (Armenian)
January 2006